

Արձանագրություն 3

2016թ. մարտի 25-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկ՝ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան/

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկ՝ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան/

3.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանը: Նա, մրցունակ կադրերի պատրաստումը համարելով ուսուցման նպատակ, ներկայացրեց հայեցակարգային այն աշխատանքները, որոնք կատարվել են ֆակուլտետում նշված նպատակին հասնելու միտումով: Նախ անդրադարձ կատարվեց 1-ին կուրս ընդունելության, 1-ին կուրսեցիների և նրանց ծնողների մասնակցությամբ տեղի ունեցած ժողովի, հարցաթերթիկների միջոցով 1-ին կուրս ընդունվածների տրամադրվածությունն ու նախասիրությունները պարզաբանելու հարցերին, ապա ներկայացրեց ֆակուլտետի, բաժինների և կուրսերի առաջադիմությունը՝ հանգամանորեն վերլուծելով առաջադիմության հետ կապված խնդիրները: Դասախոսական կազմը հիմնականում մնացել է նույնը, ուսպլաններում մտել են նոր կրթական ծրագրեր, կատարվել են դասալսումներ, կազմակերպվել են քննարկումներ, տարբեր բնույթի միջոցառումներ: Հ.Ղաջոյանը ներկայացրեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Նա ասաց, որ իրենց նպատակը որակյալ մասնագետների պատրաստումն է: Ներկայացնելով ուսման առաջադիմության ցուցանիշներն 2014-2015 ուստարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ նա նաև նշեց, որ աշխատում են ապահովել կրթության որակի շարունակական աճ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց տվյալներ գորակոչվածների և գորացրվածների, տարկետումների, տեղափոխությունների, հեռացումների և վերականգնումների վերաբերյալ: Ֆակուլտետում անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ, կազմակերպվել են գիտաժողովներ, դասախոսություններ, քննարկումներ: Ս.Ամիրխանյանը կարևորեց այն հանգամանքը, որ ուսուցումը կազմակերպվում է միջազգային չափանիշներին համապատասխան և շուկայի հարաճուն պահանջների հաշվառմամբ, ուստի ուսպլաններում ավելացվել են նոր դասընթացներ: Ներկայացնելով 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը՝ նա ասաց, որ այն համապատասխանում է ԳՊՀ ռազմավարական ծրագրի պահանջներին: Ս.Ամիրխանյանը ներկայացրեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:

Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեցին Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Ռ.Սարգսյանի «Практикум по слово образованию современного русского языка» և Ն.Ռափյանի «Լատիներեն և դեղագործական տերմինաբանություն» ձեռնարկները տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցումների շուրջ ելույթ ունեցան գիտխորհրդի անդամները

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

3.ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Հավանություն տալ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

5.Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Ռ.Սարգսյանի «Практикум по слово образованию современного русского языка» և Ն.Ռափյանի «Լատիներեն և դեղագործական տերմինաբանություն» ձեռնարկները երաշխավորել տպագրության:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ասոյան